ՈՐՈՇՈՒՄ

Վարչական բողոքը մասնակի բավարարելու, Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 1807610404 որոշումը բեկանելու, իսկ թիվ 1807610399 որոշումն անփոփոխ թողնելու մասին

<<28>> 02 2018թ. 174-20694-18/174-3084 ք.Երևան

ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Տիգրան Մակարյանի դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

Երևան քաղաքի Սարյան փողոցի 40 շենքի 43 բնակարանի բնակիչ Տիգրան Մակարյանը դիմումով խնդրել է անվավեր ճանաչել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 1807610399 և 1807610404 որոշումներից որևէ մեկը, քանի որ նույն իրավախախտման համար կայացվել է երկու որոշում:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ Երևան քաղաքի Կոմիտաս - Գրիբոյեդով փողոցների խաչմերուկի հատվածում 5.15.1 <<Երթևեկության ուղղությունները գոտիներով>> ճանապարհային նշանի պահանջը չպահպանելու համար դիմումատուին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին թիվ 1807610404 որոշումը տեխնիկական վրիպակի արդյունք է, հետևաբար ենթակա է բեկանման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 1807610404 որոշումը բեկանել և վարչական իրավախախտման վերաբերյալ գործը կարճել:
2. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 1807610399 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքը՝ դրան վերաբերող մասով, առանց բավարարման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
4. Սույն որոշման օրինակն ուղարկել Տիգրան Մակարյանին և ՃՈ ՏՄՀԽԱ կենտրոն:

Ե.Կարապետյան